ԼՐԱՑՈՒՄ

Ժողովածուի հրատարակութիւնը գրեթե ավարտված էր, երբ Մատենադարանի գիտ. աշխատող Ս. Լալաֆարյանը (որը կազմել է Վրացական Դիտութիւնների ակադեմիայի Ձեռագրերի ինստիտուտի հայերեն ձեռագրերի ընդարձակ ցուցակը) Թբիլիսիից բերեց նոր գտված մի Մաշտոցի հիշատակարանը, 1458 թ. վերաբերող ուշադրավ բովանդակութիւամբ։

Ստորև հրատարակում ենք այն։

ՄԱՇՏՈՑ

Վրաստանի Ձեռագրերի ինստիտուտ (նախկին՝ Պատմական թանգարան), ձեռ. № 247

Գրիչ՝ Կարապետ
Վայր՝ Վան

ա

342ա Արդ, գրեցաւ սուրբ գիրքս, զոր արարեալ է սուրբ հօրն Մաշթոց վարդապետի և կոչի Մաշթոց՝ ըստ անուանն իւրոյ, որ ունի հաւաքեալ յինքեան զսահմանադրութիւն եւթն խորհրդոյ եկեղեցւոյ ի թուականիս Հայոց ՉԸ. (1458) ամին, ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոս Նախավկայիս և սուրբ Սահակ հայրապետիս։ Ի հայրապետութեան տեառն Գրիգորի, և մերոյ առաջնորդաց սուրբ ուխտիս Վարազայ մեծ և փոքր տեր Յովանիսի և Զսքարիա վարդապետի։ Ի թագաւորութեանն Ջիանշայիհ, որ գնացեալ բազում զօրօք էառ զՇիրազ և զԲրման, զՀրէ և զխորասան և զբովանդակ տունն Պարսկաց.

342բ . Եւ որդի Նորա ելեալ ի Մակուայ Նստաւ ի Թավրէզ հակառակ հաւր իւրոյ և մեք ոչ գիտեմք թէ զինչ լինելոց եմք։ Եւ ի յայսմ ամի եղև մահտարաժամ սաստիկ, որ յամէն աւր Լ. (30) և Խ. (40) ոգի մեռանէր միայն ի քաղաքիս։

Արդ, ի յայս վշտաշատ և դառնաշունչ ժամանակիս ցանկացող եղև այսմ աստուածաշունչ տառիս երջանիկ և սրբասէր կրաւնաւորն Գրիգոր, և ստացաւ զսա ի յարդար վաստակոց յիշատակ բարի հոգւոյ իւրոյ, և ծնողաց իւրոց Ատոմին և Մարթային, և եղբարցն Վարդանին և Հերապեանին, և ամենայն ազգականացն՝ կենդանեացն և հանգուցելոցն։..։

բ

168ա Ստացող սուրբ գրոցս զԳրիգոր կրօնաւորն յիշեցէք յաղաւթս ձեր աղաչեմ, որ Վարագայ ետ գրել զսա, որք հանգիպիք աստուած-ողորմի ասացէք։ Թվ. ՉԷ. (1458), որ մահտարաժամ եղև սաստիկ։